

ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանասիրական գիրությունների թեկնածու

ՍԻԱՄԱՆԹՈՅԻ ՊՈԵԶԻԱՅԻ ԱՐՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՄՎՈԼԻՉՈՒՄ ՆԵՏ ԵՎ ՀԱՅ ՄԱՍՈՒՀԸ (1900-1910-ԱԿԱՆ Թ-Թ.)

Սիամանթոյի ստեղծագործությունը մեծ հետաքրքրություն էր առաջացրել ոչ միայն արևմտահայ, այլև արևելահայ ընթերցողների շրջանում, այն էլ բավականին վաղ՝ 1899-1900 թթ., մամուլում առաջին բանաստեղծությունների տպագործյան հետ մեկտեղ: Թեև գրական բանավեճեր (կամ բանակոփվեթք) իրենց դասական իմաստով չեն ընթացել, սակայն տարրեր պարբերականներում արտահայտված կարծիքների՝ հաճախ հակադիր, իրարամերծ բնույթը, նաև որոշ տեսակետների ընդհանրությունը ի մի բերելով, կարելի է ներկայացնել դրանք մեկ միասնական գործընթացի մեջ և ավելի քան տասը տարվա (1900-1913 թթ.) համապատկերում:

Հստ այդմ, ինչպես քննում Սիամանթոյի պոեզիան սիմվոլիզմի հետ ունեցած առնչությունների համատեքստում:

Սկզբից ևեր նկատելի է երկու հիմնական միտում. մի դեպքում բանաստեղծի չափածո գործերը խիստ քննադատվում են՝ նկատի ունենալով նրա հակումը դեպի «ունկադեմտիզմ», անհարկի բառաբարդումները և «սիմվոլամոլությունը», մյուս դեպքում զնահատվում է խոշոր անհատականությունը, նրա բանաստեղծական հզոր թափը, ավանդական թեմատիկային միանգամայն նոր շունչ ու ոփի հաղորդելը: Կար նաև երրորդ մոտեցումը. Սիամանթոյի տաղանդը գնահատելով հանդերձ, որոշակի գգուշավորություն էին ցուցաբերում մատնանշելով եկրոպական սիմվոլիզմի ազդեցությունը, գեղարվեստական պատկերավորման որոշ թերություններ և այլն:

«Անահիտ»-ում տպագրած (1900 թ. փետրվար) նրա բանաստեղծությունները բացասական արձագանք գտան հատկապես արևելահայ պարբերականներում («Մշակ», «Մուրճ», 1900-1903 թթ.): «Մշակի» հոդվածագիր S. Հովհաննեսյանը, սիմվոլիզմը միանըշանակորեն համարելով դեկադեմտական հոսանք, խիստ և հեզանական խոսքեր է ուղղում «Անահիտ» ու այնուներ տպագրված հայ սիմվոլիստների հասցեին: Մասնավորապես հիշատակելով U. Ցարճանյանի «Հոգմություն», «Բարեկենդանի իրիկուն» բանաստեղծությունները՝ նա գրում է. «Ի՞նչ օգուտ կարող է ստանալ խեղճ ընթերցողը այդ հոգիներից, որոնք սառում են լուսնից թափվող ձյունից, պահանջ են զգում մսե պատանքի, անտեսանելի թաթով շալակներ են շոշափում... - այդ դժվար է հասկանալ մեզ, հասարակ մարկանցությանը, որ անընդունակ ենք «Անահիտ» աշխատակիցների նման նայել աշխարհին...»¹:

¹ S. Հովհաննեսյան, Մեր դեկադեմտները, «Մշակ», 1900, N 75, 26 ապրիլ:

Նմանաբնույթ մոտեցման կարելի է հանդիպել «Մշակի» 1903 թ. համարներից մեկում տպագրված հոդվածում («Մի գրական նորություն», «Մշակ», 1903, N 196, 9 սեպտեմբերի), որի հեղինակ Լեռն, բանավիճերով «Բանքեր գրականության և արվեստի» ամսագրի խմբագիր Ն. Աղոնցի հետ, քննադատում էր Գրամ Ա. Յարճանյանի պես բանաստեղծների «դեկադենտական», «զառանցական» գործերը ամսագրում տպագրելու համար:

«Մշակի» և «Մուրճի» ուշադրություններից չեղ վրիպում նաև Սիամանթոյի առաջին ժողովածուն: Սիամավորապես «Մուրճի» հոդվածագիր Լ. Ս.-ի փոքրիկ գրախոսությունը բանաստեղծի առեղծագործական ողին չըմբռնելու և դրանով իսկ նաև ընթերցողին ապակողմնորոշելու դասական օրինակ է: «Դյուցազնորեն» ժողովածուն՝ «դեկադենտ կամ սիմբոլիստ ուղղության»-ը՝ «ստրկորեն» հետևելու ձախողված փորձ է: Գրախոսին դուր չեն գալիս բանաստեղծությունների «սիմբոլմերով թաքնված մտքերն ու զգացմունքները», որոնք դեմ են գեղարվեստի «ամենատարրական պահանջներին»²:

Սիամանթոյի պոեզիան միանշանակորեն մերժում է նաև Մինաս Բերբերյանը իր «Գրականական ակնարկներ»-ում, որ տպագրվել է «Արարատ»-ում 1908 թվականին (Մ. Բերբերյանը համարում խորագրով հրապարակումներ ունի նաև «Նոր Դար» թերթի 1899-1900 թթ. համարներում): Ի շարու այլ ժողովածուների՝ հեղինակն անդրադառնում է նաև «Հոգիվարքի և Բույսի ջամեր»-ին: Տարիներ էին անցել, այդ ընթացքում զգալիորեն փոխվել եր վերաբերությը Սիամանթոյի պոեզիայի մկանամբ, այնինչ Բերբերյանի հրապարակումն ասես Լ. Ս.-ի գրախոսության հիմնական մտքերի կրկնությունը լիներ: Նա ևս գտնում էր, որ «մերոնք» ոչ թե օտարի լավ կողմերից են ազդվում, այլ «անմարսելի դատարկությունց»: Վերջում կամնատեղով, թե նման ձևով գրողները ընթերցող չեն ունենա, պատճառաբանում է: «Որովհետև հեղինակը ստրուկ է մոդայի, մոդեռնիզմի, որոնք պարզ պոեզիան մի կողմ թողած՝ և՛ զգացմոնք, և՛ բանականություն զոհ են թերում սիմբոլների կուտակման, գիտակցական տարօրինակություններին»³:

Վերոհիշյալ մոտեցումներից որոշակիորեն տարբերվում է «Մշակի» 1901 թ. դեկտեմբերյան վերջին համարներից մեկում Վ. Նալբանդյանի տպագրած գրախոսությունը «Դյուցազնորեն»-ի մասին: Երիտասարդ քննադատը թեև ընդունում է սիմվոլիզմն իրու ընական երևույթ, սակայն մերժում է նրանում առկա «արթեստականությունը», որն ավելի հաճախ «բարի արվեստագետներ» է ծնում: Ի տարբերություն նախորդների՝ Նալբանդյանը ճիշտ է ըմբռնում Սիամանթոյի պոեզիայի էլույցունը: Ներկայացնելով նրան իրու սիմվոլիզմի ներկայացուցիչ արևմտահայ գրականության մեջ՝ նա նշում է: «Պ. Յարճանյանի մեջ մենք գտնում ենք բարերախտաբար, ոչ միայն բառերի, այլև զգացմունքի բանաստեղծ», ապա եզրակացնում է: «Զտվելոց և հոկվելոց հետո նա կարող է շատ հուսալի դառնալ»⁴:

«Մուրճի» հաջորդ գրախոսությունը նվիրված էր 1905-ին լուս տեսած «Հայորդիներ» ժողովածուին: Հեղինակը (Տ. Զավեն) Սիամանթոյին համարում է հայ «ամենաուժեղ խորհրդապաշտ բանաստեղծը»: Տ. Զավենի վերաբերմունքը միակողմանի չէ. զգում և գի-

² Տե՛ս Լ. Ս., Արոմ Յարճանյան, «Դյուցազնորեն», «Մուրճ», 1902, N 1, լ. 2 142-143:

³ Մինաս Բերբերյան, Գրականական ակնարկներ, «Արարատ», 1908, Էջմանյան, համար Ե. - Զ., լ. 2 494:

⁴ Վ. Նալբանդյան, Արոմ Յարճանյան, «Դյուցազնորեն», «Մշակ», 1901, N 291, 30 դնկվելմբնի:

տակցում է «Հայորդիների» հեղինակի լուրջ կարողությունները և կարծում է, որ որոշ ժամանակ ան հայ գրականության կարող է տալ «մեծ արժեքով գործեր»:

Սակայն թերախավատ վերաբերմունք ունենալով սիմվոլիզմի հանդեպ և հատկապես շեշտեղով նրա ոչ «դեմոկրատիկ Ակարագիրը»՝ հեղինակն այս բնութագիրն անուղղակիորեն վերագրում է նաև Սիամանթոյի պոեզիային և ընկառու հակասության մեջ: Ընդհակառակը, հայ բանաստեղծին բնորոշ էր «դեմոկրատիկ Ակարագիրը», առավել ևս «Հայորդիներ» շարքին, որտեղ բանաստեղծական հզոր շնչով տիպականացվել էին հայ ժողովրդի լավագույն զավակները (Անդրամիկ, Խրիմյան Հայրիկ, Արյուր Սերոբ Վարդանյան): Թերևս այս հակասությունն է պատճառը, որ հոդվածագիրը սիմվոլիզմի տեսական սկզբունքների մասին խոսում է երկար, իսկ «Հայորդիների» վերլուծությունը տալիս ընդամենը մի քանի տողով...

Հետաքրքիր է, որ «Մուրճի» և «Մշակի» բացասական վերաբերմունքը սիմվոլիզմի՝ որպես դեկադենտական ուղղության հանդեպ և այս սկեռումով Սիամանթոյի պոեզիայի քննադատությունը շարունակվում է նաև 1910-ական թվականներին: Նման «համար հետևողականության» արտահայտություններից մեկն էլ Հ. Սուրիսաթյանի «Արյան մղջավանջի և ըմբռաստության երգիչը» հոդվածն է («Մշակ», 1913): Ընդունելով արդեն բանաստեղծի մեծությունը, հայության ցավերն ու տառապանքները խորապես վերապրելու և դրանք տաղանդապոր գրչով երեկայցնելու կարողությունները, Սուրիսաթյանը նույնապես չի մոռանում նշել, որ այդ ամենով հանդերձ, Սիամանթոն ևս դարասկզբի նորագույն բանաստեղծներից շատերի հման «իր վոր կրում է դեկադանասի և սիմվոլիզմի մի քանի տարրերը»: Ապա շեշտում է հատկապես նրա «իհետրավորված դարձվածքները, բարդ խրթին ոճը» և թերում օրինակներ՝ եզրակացնելով, թե դրանք «մոռություններ են, ...որոնք բդյուն են արտահայտության աղքատությունից... Հենց իսկական դեկադանասը սա է»⁵:

«Խորհրդապաշտ» թարմանյանի պոեզիայի հանդեպ միանշանակ չէր վերաբերմունքը նաև արևմտահայ մամուլում: Սիմվոլիզմի գեղագիտությունը թերագմահաստող «Բազմավեպի» հեղինակը Սիամանթոյին նվիրված առաջին իսկ հոդվածում («Հայկական ժամանակակից բանաստեղծությունը», 1907, թիվ 3) երեւնն հոսորախառն, երեւնն լուրջ տոնով անդրադառնում է բանաստեղծի ոճին: Նա մասնավորապես առանձնացնում է մի շարք բառային պատկերներ («Կարմիր կամք», «Բուլսի շուշաններ», «Երկարեն ձյուն» և այլն), փորձում վերծանել դրանք, նաև առիթը չի կորցնում կծու խոսքեր նետելու «այն քիչ մ'անորոշ, մշուշապատ դպրոցի» հասցեին: Մի կողմ թողնելով բուն նյութը՝ Հ. Ղ. Բժիշկյանը մինչև վերջ շարունակում է իր կիսաթեզմական որակումները՝ եզրակացնելով: «Հոգեվարքը և հովաներէ հետո՞ անոնց Զահերն ունեցանք. զահեր՝ վառված հզոր երևակայութենն մը այն ամենը գիշերվան մեջ՝ որ խորհրդապաշտ բանաստեղծությունն է»⁶:

Ավելի լուրջ է վերաբերմունքը նոյն ամսագրի թիվ 9-10-ում տպագրված հոդվածում: Այս անգամ Սիամանթոն Անդրեկայցացվում է իրեն ճամաչված և ընդունված բանաստեղծ, «լուրջ խորհրդապաշտ», որը կոչված է «վերանորոգիչի դեր մը» կատարելու հայ գրականության մեջ: Հոդվածի երկրորդ մասը կրկին անդրադարձ է բանաստեղծի ոճին. առանձ-

⁵ Սուրիսաթյան, Արյան մղջավանջի և ըմբռության երգիք, «Մշակ», 1913, N 285, 22 դեկտեմբերի:

⁶ Հ. Ղ. Բժիշկյան, Դայկական ժամանակակից բանաստեղծություն, «Բազմավեպ», 1907, թիվ 3, մարտ, էջ 132:

Աացվում է երկու էական կողմ: Նախ՝ պատկերների առատությունն ու թարմությունը: Կարևոր հանգամանք է դիտվում Օրանց անսովորությունն ու «բառերու խորիրդականությունը», որոնց խորքային շերտերին հասու լինելով՝ ընթերցողն ի վերջո կարող է փարատել «ամիմանանվության մեջը»:

Մեկ այլ էական հատկանիշ համարելով «եզականությունը» հետինակը Սիամանթոյի բանաստեղծական ոճը կրկին հարաբերակցում է եվրոպական սիմվոլիստների պուտիկային՝ ճշելով, որ տվյալ դեպքում հայ բանաստեղծը նաև «իբր կաղապար ընորված անձ մը ումի»՝ բեղիացի բանաստեղծ է: Վերհանմը: Այնուհետև բնութագրում է Սիամանթոյի «եզականությունը»: «Այն կազմված է այն մեծ հակասությամբ՝ որ կա իր նախասիրած նյութերուն և նախասիրած ձևերուն մեջ»⁷ (ընդգծումները հետինակինն են - Դ. Պ.): «Եզականությունն» իբրև հակասություն դիտարկելով՝ հոդվածագիրը նկատուի ումի հետևյալը: Սիամանթոյն արևելյան կյանքն է պատկերում «արևմտյան արտահայտությամբ», կամ այլ խոսքով՝ «Հայաստանը կերգե բայց ապրելով Եվրոպայի մեջ»⁸:

Մենասերը չի մոռանում խորիրդապաշտ դպրոցի թերությունները, նրան բնորոշ անկումային տրամադրությունների, արվեստականության, երևակայության «հուսահատ ճիգերի» առկայությունն՝ վերջում ցանկություն հայտնելով տեսմել հայ բանաստեղծի պուգիան սիմվոլիզմի լավագույն հատկություններով օժտված:

Ըստամենը երկու-երեք տարվա ընթացքում նկատելի են սիմվոլիզմի և նրա հայ հետևողների նկատմամբ «Բազմավեպի» վերաբերմունքի փոփոխության լուրջ նշաններ: Եթե 1905-ին տպագրված հոդվածում («Խորիրդապաշտ դպրոցը հայ գրականության մեջ») առաջադրված հարցին՝ «Պետք է հայ գրականությունը խորիրդապաշտության հետուի», միանշանակողն բացասական պատասխան էր՝ տրվում, ապա այժմ հայ խորիրդապաշտ բանաստեղծ համարվում է դարակազրի մեր գրականության խոշորագույն ներկայացուցիչներից մեկը, որը «չափազանց սիրված է» հայության մեջ:

Սիմվոլիզմի հետ Սիամանթոյի պուեզիայի առնչությունները յուրովի էին զնահատում նաև նրա մեծությունն՝ անվերապահ ընդունողները: Մասնավորապես Արշակ Չոպանյանը, որ դեռևս 1900-ին «Անահիտ»-ում տպագրել էր բանաստեղծի արձակ և չափածո միշարք գործեր, 1902-ին առաջիններից մեկն է գրախոսում «Դյուցազնորեն» ժողովածուն: Նրա կարծիքով՝ այս գրքով կը «ամենեն հզոր տեսիլքներն մին է զոր հայ միտք մը հիացած ու աղնձի մեջ քանդակած ըլլա»⁹: Նախապես մատնանշելով Սիամանթոյի ստեղծագործական կյանքի առաջին շրջանում (մինչև «Դյուցազնորենը») Մ. Մետերիկանի և Հ. Վերհանմի «տիրական» ազդեցությունը՝ քննադատը միաժամանակ ավելացնում է, որ բանաստեղծը զգալի առաջընթաց է ապրել, և այժմ այդ ազդեցությունը ժողովածուում նկատելի է միայն «արտահայտության ձևին» առումով: Սիամանթոյի մասին նաև շարունակում է հիացմունքով խոսել նաև «Հոգեվարքի և հուսի ջամփեր» ժողովածուի լույսընծայման կապակցությամբ: Կրկին անդրադառնալով Սիամանթոյ-Եվրոպական սիմվոլիստներ (Հ. Վեր-

⁷ Մենասեր, Սիամանթոյ, «Հոգեվարքի և հուսի ջամփեր»ու հետինակը, «Բազմավեպ», 1907, թիվ 9-10, էջ 419:
⁸ Նոյն վկանում, էջ 420:

⁹ Արշակ Չոպանյան, Գրքեր և թերթեր. Ակտու Ցարծանիան, «Դյուցազնորեն», «Անահիտ», Փարիզ, 1902, N 3, էջ 53:

հառն, Մ. Մետերլիմկ, Համբի Դը Ռենենէ) փոխարաքերության խնդրին՝ Չոպանյանն ուշագրավ բացահայտումներ է անում: Նախ՝ նշվում է, որ հայ բանաստեղծը վերջնականացնելու հայոթահարել է հրանց ազդեցությունը և ստեղծագործում է «ազատ ու ինքնատիկ ձևով մը»: Առավել հետաքրքի է երկրորդ դիտարկումը. ըստ Չոպանյանի՝ Յարճանյանն ուղղակիորեն սերում է այն հին երգչներից, որոնք վերաներն ու Աստվածաշունչն են կերտել: Բայց արդյո՞ք նույն ակունքից չեն սնվել Մետերլիմկն ու Վերիանը: Եթե այդպես է, ուրեմն մրանք ևս «տարապայմանին, ծայրահետին, խորհրդավորին ու հանդուզմին, գերազուն նրբության և զերագույն հուզման համար իրենց ունեցած տարիանքնիվ շատ մոտ են Արևելքի հին պուտեներուն...»¹⁰:

Այս դիտարկումից կարելի է երկու հետևողուն բխեցնել. առաջին, Արևելքը շարունակում է սնել Արևմուտքի բանաստեղծությունը, երկրորդ, Սիամանթոն փաստորեն ոչ միայն բովանդակության, այլև ձևի առումով «խորապես արևելցի» բանաստեղծ է: Չոպանյանը, սակայն, կանգ չի առնում և շարունակում է՝ հանգելով նոր հետևողայն: Քանի որ Արևելքի բանաստեղծությունը «ընդհանրապես ոռմանթիկ է», ուստի «Յարճանյան, իբր ճշմարիտ Արևելյան միտք, անհապնորեն ոռմանթիկ է, իրմեն ավելի ոռմանթիկ բանաստեղծ չենք ունեցած, նույնիսկ ամոնց մեջ որ պատմականորեն «ոռմանթիկ» կոչված շրջանին ապրած են...»¹¹:

Եզրահանգումն արդեն իսկ սուբյեկտիվ է, քանզի հատակորեն դրված է անձնական կարծիքի դրոշմը («իրմեն ավելի ոռմանթիկ բանաստեղծ չենք ունեցած», բայց և այնպես հոդվածագրի դիտարկումները ինքնատիկ և թարմ շունչ ունեն: Նման մոտեցմամբ Չոպանյանը նաև ուղղորդում էր հայ քննադատական միտքը դեպի ազգակենտրոն մտածողություն: Սիամանթոյին սիմվոլիստ կամ դեկադենտ համարողները գրական այս դպրոցի հանդեպ ունեցած բացասական մտապելության ներքո հանդիպակի թերագնահատում էին իսկական բանաստեղծին, նրա հզոր թափն ու մարտական ոգին: Այսինք Չոպանյանի մատն այս զարկերակի վոր էր, իսկ «ոռմանթիկ բանաստեղծ» բնորշմամբ, հանձին Սիամանթոյի, նաև տեսանում և ընթերցողին մատնացուց էր անում ազգային ոգու կենսունակ շերտերը լավագույն վերծանողին:

Ընդհանուր առնամբ քիչ չէին նաև այն քննադատները, ովքեր սիմվոլիզմի հետ ունեցած աղերսները համարում էին բանաստեղծի ստեղծագործության կարևոր արժանիքներից մեկը: Այս առումով դարասկզբի (1900-1903 թթ.) արևելահայ մամուլում «առաջին ծիծնականերից» մեկը Վրթանես Փափազյանն էր: Նրա «Մեր կաղապարային քննադատները» հոդվածում նորի և նմի հակամարտության մեջ սիմվոլիզմը դիտվում է իրև գրական առաջադեմ հոսանք, իսկ նրա հայ հետևորդներից Ա. Յարճանյանը՝ անվերապահ հիացմունքի արժանի: Այն, ինչի համար քննադատում էին «Մշակի», «Մուրճի» հոդվածագիրները՝ բանաստեղծին համարելով «զառանցական» մտքերի ու ձայների, անհասկանալի բառաբարդումների հեղինակ, Փափազյանի հուզական գրչի տակ այլ մեկնաբանություն է ստանում. «Բայց, իրա՞վ, այդպե՞ս է. բառերի կուտակումնե՞ր են օրինակ հենց Յարճան-

¹⁰ Արշակ Չոպանյան, Արտօն Յարճանյան, Շագանական, Կովկասի և հոյսի ջամեր, «Անակիպ», Փարիզ, 1907, N 3-4-5,

լշ 88:

¹¹ Նոյն գիրում, լշ 89:

յանի այն խորունկ և վսեմ արտահայտություններով, այն գեղեցիկ պատկերացումներով բանաստեղծությունները, որոնց մեջ զգացմունքների զորեղությունը սառեցնում է մարդու և ուր հայ լեզուն հասցրած է իր բարձր շքեղության¹²:

Ըստ որում, սա Աերկալացվում է իրոք սիմվոլիզմի գեղագիտության «ոչ շարլոն» դրսերում հայ բանաստեղծության մեջ:

Այս կերպ ընկալողները ամեկանիսակալ քննությամբ համադրում էին Սիամանթոյի պունզիայում առկա սիմվոլիստական տարրերը նրա գաղափարական ըմբռումների, նաև լեզվառնական ու գեղագիտական այլ յուրահաստկությունների հետ: Մասմավորապես «Հողագոռնի» 1909 թ. համարներից մեկում «Կարմիր օրերի ողբերգուն» հոդվածի հեղինակը, վերլուծելով Սիամանթոյի նոր ժողովածուն, գրում է. «Էլյուել էլ Յարճանյանը սիմվոլիք բանաստեղծի իր տաղանդին միացնում է դաժան իրականության հարազատ Ակարչի իր պատկերը»¹³:

Բանաստեղծի սիմվոլիստական հակումներին ինքնասիա մեկնարանություններ է տվել Ռուբեն Զարդարյանը: «Հոգեվարքի և հույսի շամել» ժողովածուի նախարանում արժեվորելով Սիամանթոյի պոեզիան, նա կանգ է առնում հատկապես այն իրողության վրա, որ Յարճանյանը իր չափած գործերում հաջողությամբ մարմնավորել է խորհրդապաշտությունը ու Նարեկացու «ուժեղ Աերշնչումը»¹⁴:

1910-ական թվականներին Սիամանթոն արդեն դասական հեղինակի համբավ ուներ՝ ընթանակած և ճանաչված հայրենիքում ու Սիփուլքում: Հանձին նրա սիմվոլիզմը հայ պոեզիայում ձեռք բերեց նոր հնչեղություն, զգալիորեն ընդլայնվեցին բանաստեղծական պատկերի, բայց իմաստային և զգացական ընկալման սահմանները: Մասմավորապես պատկերի երկաստիճան (Երկալա) կառուցվածքը ի գորու եղավ իր մեջ Աերառելու և ապա նաև որոշակիորեն հումանավորելու բանաստեղծի մտածումների և հույզերի անսպառ ընթացքը:

Հայտնի են նաև արևմտահայ մեկ այլ խոչոր բանաստեղծի՝ Մ. Մեծարենցի ստեղծագործական առնչությունները սիմվոլիզմի հետ և այդ կապակցությամբ ծավալված բանակոփվ արևմտահայ մամուլու¹⁵: Մեծարենցի և Սիամանթոյի մասին արտահայտված կարծիքների քննությունը ի հայտ է բերում մի շաբաթ ընդհանրություններ ու տարրերություններ:

Նախ՝ ընդհանրությունների մասին:

Արդեն իսկ գրական նոր հոսանքի հետ հայ բանաստեղծների հայորդակցությունը, առավել ևս՝ նրանից ազդված լինելու հանգամանքը որոշակի գգուշավորության էր մղում ավանդապահ քննադատներին ու գրախոսներին: Զգուշավորությունն առաջ էր բերում կողմնակալ մոտեցում, իսկ նման հայացքը, ընականաբար, խանգարում էր ազատ և անկաշկան ընկալելու գեղարվեստական երկի արժանիքները, Ակատելու այն նոր ու բարմ

¹² Վ. Փափազյան, Մեր կաղապարային քննադադար, «Տարագ», Թիֆլիս, 1903, N 34, լշ 302:

¹³ Մարգար, Կարմիր օրերի ողբերգուն, «Նորիզոն», 1909, N 38, 8 դնկվենմբերի:

¹⁴ Արտմ Յարճանյան, Հոգեվարքի և հույսի շահեր, Ժնև, 1907, լշ III :

¹⁵ Այս մասին փես մեր «Սիմվոլիզմ Սիսար Մեծարենցի պոեզիայում (Բանակոթիվ արևմտահայ մամուխ էջերում)» հոդվածը, «Գրականագիրական հանդես», Բ (Դ), Երևան, 2005, լշ 46-57:

շունչը, որ բերում էին իրենց հետ մեծատաղանդ գրողները:

Վերապահ գնահատման խնդրում էական ներ էին խաղում մամուկի մի շարք օրգանների սուբյեկտիվ մոտեցումները, որոնք մի դեպքում որոշակի աշխարհայեցողության արդյունք էին (իմազես, ասենք, «Մշակի», «Մուրճի» «օգտապաշտական» ըմբռումները և համապատասխան դիրքորոշումները Սիամանթոյի ստեղծագործության նկատմամբ), մեկ այլ դեպքում՝ գեղագիտական սկզբունքների և անձնական փոխարարերություններով «սնված» խմբակային («ciseque»-ային) վերաբերումների միախառնված դրսնորում (Մեծարենցի պոեզիայի նկատմամբ «Մասիս» ամբանդուժող կեցվածքը):

Բացասարար արտահայտվող քննադատների գնահատումներում ուշագրավ էր նաև հետևյալ միտումը. նրանք մեծ մասամբ անտեսում էին «դեկադանա» և «սիմվոլիզմ» հաւակացությունների էական տարրերությունները, մասնավորապես՝ եվրոպական գեղագիտության մեջ արդեն իսկ որոշարկված այն դրույթը, որ սիմվոլիզմն ի վերջո անկումային հոսանք չէ: Ավելին, այս դպրոցի հաջ հետևորդներին և նրանց ստեղծագործությունները նեմացնելու հապատակով հաճախ պիտակավորում էին «անկապաշտ», «դեկադենտ», «դեկադենտորեն» և նման այլ եզրույթներով (տերմիններով):

Չի բացառվում նաև, որ բացասական այս տրամադրությունները ինչ-որ առումով զգաստացնող ներ խաղացած լինեն Սիամանթոյի և Մեծարենցի ստեղծագործական կյանքում: Վերջինս պատասխան եղությաներում փորձում էր համոզել. ինքը երբեք սիմվոլիզմի ստրկամիտ հետևորդ չի եղել՝ իրողություն, որը բանաստեղծի մոտ ինքնազման կառուցի գոյությունը վկայող յուրօրինակ խոստովանություն է: Իսկ Սիամանթոյի պոեզիայում, հատկապես վերջին շրջանի գործերում (հիշենք «Հայրենի հրավեր» շարքը) գեղարվեստական պատկերավորման սիմվոլիստական սկզբունքներն առանձնապես նկատելի չեն:

Ուշագրավ ընդհանրություններից մեկն էլ այն է, որ երկու բանաստեղծներն էլ ունեին իրենցով անվերապահ հիացողներ, որոնք ոգևորված էին նրանց հայտնությամբ, մամուկի էշերում ազդարարում էին այդ մասին՝ փոքր-ինչ չկասկածելով իրենց ներքին զգացողությանը: Նրանք ոչ միայն չեն ժմխտում սիմվոլիզմի հետ այս բանաստեղծների ունեցած առնչությունները, այլև հարկ եղած դեպքում ըստ արժանվույն գնահատում էին դրանք՝ ելնելով ստեղծագործողի անհատականությունից և գրական գրունթացների զարգացման տրամարանությունից: Ժամանակը ցույց տվեց, որ նրանք չեն սխալվում:

Այս ամենով համենք, մամուլում տպագրված հոդվածներն ու գրախոսականները ի ցույց են դնում նաև մոտեցումների, քննադատական արձագանքների որոշակի տարրերություններ:

Արդեն նշել ենք, որ Սիամանթոյի պոեզիան, ի տարբերություն Մեծարենցի, գրական ուղղակի բանավեճերի կամ բանակոփակների առիթ չի տվել, թեև հակադիր կարծիքներ և՝ արևմտահայ, և՝ արևելահայ մամուլում շարունակվում էին հրապարակվել (հատկապես մինչև 1910 թվականը՝ վկայելով, որ բանաստեղծի չափած երկերը առերևույթ չերևացող, բայց մոտեցումների անողակակի բախումներով հարուստ երկխոսության տեսադաշտում են):

Կարևոր հաճամամանք էր այս բանաստեղծների վերաբերմունքը իրենց ստեղծագործություններին տրվող գնահատականներին: Մեծարենցն ակտիվ բանակում մեջ էր հա-

կառավորդների թես, հանդեսների էջերում պաշտպանում էր իր գեղագիտական սկզբ-քրությունը, ընդ որում թե՛ անհատապես և թե՛ համակիրների խմբով: Այժմն Սիամանթուն, որքան մեզ հայտնի է, իր մասին գրված որևէ հրապարակման մամուլով չի արձագանքել: Արդյունքում Մեծարենցի դեմ եղությունները, ցավոք, որոշ դեպքերում անցնում էին պատշաճության սահմանները, և հայտիյախառն որակումներով արժեգործվում էր բանականության պարագայում թեև քիչ չէին բացասական զնահատականները, սակայն դրանք անձնական վիրավորանքի շեշտեր չեն ունեցել:

Հետաքրքիր մի իրողություն. Մեծարենցի պոեզիան դարասկզբի (մինչև 1910 թվականը) արևելահայ մամուլում առանձնակի վերաբերունքի չի արժանացել: Արևելահայերը զնահատում էին այս բանաստեղծին՝ հիմնականում եղեղով արևմտահայ պարբերական-ներում լուս տեսնող հոդվածների ուղղվածությունից: Նրա պոեզիան արևելահայ իրականության մեջ ըստ արժանվույն սկսեց զնահատվել 1910-ական թվականներին, ապա նաև՝ խորհրդային տարիներին:

Սիամանթոյի պոեզիան այս առումով երջանիկ բացառություն էր. առաջին իսկ բանաստեղծությունների տպագրությունից հետո հայտնվել է արևելահայ պարբերականների ու շարության կենտրոնում, որոնք հրապարակված հոդվածների ու գրախոսությունների թվով չեն զիշում արևմտահայ մամուլին: Հետաքրքրությունն առաջին թեմայի հետ ունեցած հոգեհարազատության արյունք էր: Հայրենիքի տառապանքի երգիչը բացառապես նոր լիցքեր էր հաղորդել հայրենասիրական պոեզիային, այս դեպքում արևմտահայի կամ արևելահայի խնդիր չկար այլև:

Նկատելի է մի կարևոր երևույթ ևս. արևմտահայ մամուլում Սիամանթոյի պոեզիային անդրադարձել են հիմնականում «Անամիտը», «Բազմավեպը», «Ծիրակը», «Ժամանակը», «Ազատամարտը», «Չանթը», «Բյուզանդիոնը»... Ինչքան էլ զարմանալի է, այս ցանկում «Մասիս» հանդեսը չկա (որքան մեզ հաջողվեց պարզել, նրա էջերում Սիամանթոյի ստեղծագործությանը նվիրված առանձին հոդված չի տպագրվել): Հաս որոշ գրախոսների, Սիամանթուն դարասկզբի «ամենաուժեղ խորհրդապաշտ բանաստեղծն է», և այս իրողությանը դժվար թե անտեղյակ լինեին սիմվոլիզմի վտանգի դեմ ահազանգող ե. Արմենն ու իր համախունները¹⁶: Իսկ զրանց լույսունը պարզապես վկայում է, որ Մեծարենցի դեմ տարվող բանակովում, ցավոք, անձնական խնդիրների դերակատարությունը առաջնային էր...

Սիմվոլիզմի «ազգայնացումը» որքան բնորոշ էր Մեծարենցի քնարերգությանը, նույնան ու թերևս առավել հատկանշական էր Սիամանթոյի հայրենասիրական քնարին: Երկու դեպքում էլ գրական այս ուղղությունը բացահայտվեց իր նոր կողմերով՝ մեծապես հարատացնելով 20-րդ դարասկզբի հայ պոեզիան:

¹⁶ Մ. Մեծարենցի հակառակորդ Ե. Արմենն այդ փարիմներին «Մասիս» խմբագիրներից մնկն էր: